

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6775

3K112
L-39

b

ՀԿՌ2
L-39.

15 SEP 2005

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄՐԱՑԵՔ,

DEC 2009

Թ. ԼԵՊԵՏՅԱՆԱԿԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
≡ ՅԵՐԿՐՈՐԴ ≡
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՀՀ 1928 թ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1928

02 MAY 2013

7538


ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) յերկրորդ համագումարը կայացավ 1903 թ. ոգոստոսին: Բրյուսոսիլ գալուց համարյա իսկույն պատգամավորները ստիպված յեղան լամանշի վրայով տեղափոխվել Անգլիայի մայրաքաղաքը, վորտեղ հնարավոր եր ավելի հեշտությամբ ծածկվել ռուսական ախրանկայի արտասահմանյան ճարպիկ գործակալներից:

Այժմ ծանոթանանք, թե պատմական զորպիսի պայմաններում եր ձեռնարկված և գումարված մեր կուսակցության յերկրորդ համագումարը, վորս, ըստ եյության, առաջին համագումարն եր, վոր ՌՍԴԲԿ կուսակցության կազմակերպչական հիմքերը դրեց:

Հարավային նահանգներում անցել եր զործադուլների մի չտեսնված ալիք: Այդ, կարելի յե ասել, արդեն իսկական հեղափոխական մի ցնցում եր, վոր ավետում եր միապետության ամրություններին սպառնացող սոցիալական փոթորիկների մերձեցումը: Մինչև իսկ լիբրալը բուրժուազիայի որգան «Ռուսութեանյեն» Ռուսաստանի հարավում ծայր առած այդ ընդհանուր գործադուլները համարում եր «Ռուսաստանի համար այլևս խրոնիկական դարձած հեղափոխական տենդի տագնապ, վորի դեմ վերջնականապես անույժ եյին հանցագործությունները կանխելու ու նըանց արմատախիլ անհ-

ՏԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՆ. № 29
ԳՐԱՊԵՏ. 861 Բ
ՏԵՐԱԺ 4000.
ԹԵՏՐԱՏ. № 820



6109
38

լու նպատակով գոյություն ունեցող որենքներն իրանց բոլոր հավելվածներով։

Սակայն, հարավային այդ գործադուլներն անըսպասելի չեյին նրանց համար, ով ընդունակ եր դիտելու և հասկանալու քաղաքական մթնոլորդը։ Դեռ 1902 թվի հսկայական գործադուլները (ինչպես, որինակ Ռոստովի նոյեմբերյան գործադուլները) շատ ուսանելի եյին վորպես սպասնալի նախազգուշացումներ արդեն թուլանալ սկսող միապետական ուժիմի համար Անցել եյին արգեն այն ժամանակները, յերբ միապետական վոստիկանական պետությունը սանձարձակ և անպատիժ կերպով կարող եր խեղղել ամենքին և ամեն ինչ, իր գեմ չունենալով ու չտեսնելով վորևէ հասարակական ույժ, վորը կարողանար արգելք հանդիպանալ կամայականությունների այդ խեղղիչ քաղաքականությանը։

Պլեխանովի՝ 1889 թ. միջազգային սոցիալիստական կոնգրեսում համոզված շեշտով արտասանած այն խոսքերը, թե Ռուսաստանում հեղափոխությունը կը հաղթանակի միմիան վորպես հետեւանք Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական շարժման – փայլուն կերպով սկսեցին արգարանալ ՀՀ դարի առաջին տարիներում։ Պրոլետարիատը հին «Իսկրա»-յի շրջանում (1901 – 1903 թ. թ.) սկսեց խրոխտ կերպով իր հեղափոխական դատաստանին կանչել միապետությանը։

Ցերկորդ համագումարի նախընթաց յեռամյակն անցել եր իննուունական թվականների վերելքին հետեւ վոլ արդյունաբերական ճգնաժամի նշանաբանի տակ Այդ ճգնաժամն ամենացավոտ կերպով անդրադարձել

եր բանվորների դրության վրա, վորոնց վիշտը, տանջանքներն ու առասարակ կենսական շահերն այնքան եյին հետաքրքրում շահախնդիր կապիտալին, վորքան կատվին հետաքրքրում եր ճանկերի մեջ ընկած մկան շահերը։ Լոկատուտները, բանվորական որվա անչափ յերկարումը, աշխատավարձի նվազեցումը – մինչև իսկ կիսաքաղց նորմայից ել ցածր, ճնշումի քաղաքականությունը վոչ միայն գործարանում, այլև բանվորական կազմական մասներում, բացարձակ թալանը տուգանքների և գործարանային խանութների միջոցով, ամենուրեք վխացող լրտեսների ցանցը, ճորտատիրական վիրաբերմունքը գեպի բանվորները, կանանց և յերիխանների աշխատանքի ամենալվածի և սահման չճանաչող շահագործումը, բանվորներին՝ կազմական մըտրակի և զինվորների հրացանների միջոցով «իսաղացնելու» մեթոդների հետզհանե ավելի ու ավելի հաճախ կիրառումը, զուրատովզչինան՝ վորպես պրոլետարիատին այլասիրող և նրա դասակարգային գիտակցությունը ախրանկայի «սոցիալիզմով» մթագնող սիստեմ և այլն, – ահա այս բոլորն առանձնակես զարգացել եյին ճգնաժամամի տարիներում և առաջին հերթին նվազեցրել եյին բանվոր դասակարգի դիմադրելու ընդունակությունը անտեսական կովի ասպարիզում։

Սակայն և մյուս կողմից՝ բանվորների գասակարգային ինքնորոշումը նույն այդ պայմանների ազգեցության տակ վճռական քայլ եր արել գեպի առաջ։ Հավատը գեպի տնտեսական գործադուլը, վորպես իրանց դրությունը բարելավելու համար մղվող պայքարի ամենահզոր միջոց, այն հավատը, վոր բո-

տեղծվել եր 1895—1897 թվականների հաջող գործադրությախն շարժումների հետևանքով, այսինքն՝ արդյունաբերական վերելքի շրջանում, արդեն շատ թուլացել եր. Անողոք իրականության դառը փորձերից բանվորները սովորել եյին գնահատել քաղաքականության ույժն ու նշանակությունն իշխանության, վորի ողնությամբ կապիտալը՝ դաշնակցած միապետության հետ, կամ ուղղակի հենց իր կամքը թելազրելով իրան ծառայելու պատրաստ կառավարությանը, անհաղթելի կմա այնքան ժամանակ, մինչև վոր բանվոր դասակարգն իր ձեռքը չվերցնի իշխանությունը.

Այս թե ինչու, վորքան գոռողանում ու սանձարձակ եյին դառնում պարոն Մարող վաերն ու ոռւսական կիսազարդացած կապիտալիզմի այլ ներկայացուցիչներն, այնքան ավելի հաճախ ու հաճախ բանգորական մասսաները սկսում եյին պատասխանել այդ սանձարձակություններին քաղաքական գործադրունք, վորոնք յերբեմն նմանում եյին իսկական քաղաքացիական կովի հայիզողների: Այն գաղափարը, վոր բանվոր դասակարգի նախկին անտիսական կովի ձեռքը և վերածվեն քաղաքական կովի, վորն ձեռքը պետք է վերածվեն քաղաքական կովի, վորն ընդունակ լինի դառնալ իսկական համաժողովրդական հեղափոխություն, ավելի ու ավելի տիրապետում եր բանվոր մասսաների գիտակցության մեջ: Ու տարրինակ լլիներ, յեթե այդ մասսաներն իր ժամանակին չգտնեյին իրանց գաղափարական դեկավարին այդ կովի համար, յեթե նրանք իրանց շրջապատող կյանքում չհանդիպեյին հեղափոխականների խմբերի, վորքունք ընդունակ լինելին այդ գաղափարը մարմագո-

րել հեղափոխական շարժումն այդ ուղղությամբ զեկավարելու սիստեմատիկ ձևերով:

Բանվոր դասակարգի այդպիսի առաջնորդն ու քընական զեկավարը հանդիսացավ «Իսկրա»-յի խմբակը վ. ի. Լենինի գլխավորությամբ: Մոտ յերեք տարի շարունակ հին «Իսկրա»-ն աշխատում եր ամբապնդել ուռւսական բանվորական շարժման և ոռւսական հեղափոխական Սոցիալ-Դեմոկրատիայի կապը, վոր թուլացել եր կուսակցական առաջն համագումարից հետո: Յերեք տարի «Իսկրան» անդադար կոիվ եր մղում ոռւսական Սոցիալ-Դեմոկրատիայի շարքերում «Եկոնոմիստների» ուղղության՝ բանվոր դասակարգի բացառապես անտեսական պայքարի կողմակիցների դեմայն ուղղության, վորը, հարմարվելով Ռուսաստանի բանվոր դասակարգի ավելի հետամնաց խավերի տրամադրություններին, սպառնում եր յերկար ժամանակով գանգաղեցնել պրոլետարիատի ինքնազիտակցության պրոցեսը, խանգարում եր նրան ըմբռնել իր իսկական դասակարգային ինդիրները—գլուխ կանգնելու համաժողովրդական հեղափոխական շարժմանը՝ տապալելու համար միապետական կիսաճորտատիրական հասարակակարգը, վորի փլատակների վրա բանվոր դասակարգն այնուհետեւ պիտի կարողանար շարունակել իր պատմական գործն՝ աշխատանքի ազատագրումը կապիտալիստական ձնշումից:

Յերեք տարի շարունակ «Իսկրա»-ն պայքարում եր ամեն տեսակի ոպպորտյունիզմի դեմ: այսինքն՝ կիսամիջոցների քաղաքականության, անհետեղականության, համաձայնողականության և հեղափոխական կովի սուր ձեռքը բթացնելու և թուլացնելու ցան-

կության դեմ: Նա պայքարում եր ոպպորտյունիզմի գեմ վաչ միայն Սոցիալ-Դեմոկրատիայի շարքերում («Եկոնոմիզմի» կամ կուսակցական կազմակերպությունների սացիոնալիստական շեղումների դեմ, ինչպես, որինակ՝ հրեյական «Բունդ» կոչված բանվորական կազմակերպության դեմ), այլև պայքարում եր միապետության դեմ սկսվող համազգային կովկի այլ քըրոնաներում: Նա մերկացնում եր լիբերալների քաղաքականության կեղծավորությունն ու պոռնկությունը, դիմակազերծ եր անում զեմատվոնների «դժգոհ» տարբերին, վորոնք, թեև ցանկանում եյին «մի քիչ սահմանադրություն», բայց մյուս կողմից՝ սարսափում եյին բաց անել դոները բուռն տարերքի կատաղի ուժերի առաջ: «Իսկրա»-ն անդադար մերկացնում եր յերկդիմի եյությունը նարովնիկության, վորը, հարություն առնելով հանձինս սոցիալիստ—հեղափոխականների, եր այս նոր կեղեկի մեջ նույնպես շարունակում եր մնալ վարպես ցայտուն արտահայտիչ մանր-բուրժուական գեմոկրատիայի, նրա հարատես տատանողականությամբ դասակարգային կովկի յերկու քենուների՝ պլութուարիատի և բուրժուազիայի միջև: «Իսկրա»-յի խմբակը, վերջապես, առաջ եր մզում գեպի ավելի վճռական պայքար ինտելիգենցիայի առաջավոր խավերին, յերբ ուղրանք իրերի բերքամբ հարկադրված եյին լինում դիմել հեղափոխական յելույթների, ինչպես, որինակ, այդպատահեց 1900—1901 թվերին ուսանողների հետ, յերբ այս վերջինները պայքար եյին սկսել լուսավորության նախարարներ Դելյանովների և Բողովեպովների ուժից:

Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր «Իսկ-

րա»-յի խմբակը չեր կարող պատշաճ ուշադրություն չդարձնել նաև գյուղացիական շարժման կողմը, վորը ծայր եր առել 1902 թվին կալվածատերների ազարակ-ների վրա կատարված մասսայական հարձակումների ձևով: Վերջապես «Իսկրա»-յի գործունեյության թերես ամենակարենոր կողմն այն եր, վոր նա կարողացավ իր քաղաքական պլատֆորմայի վրա միացնել ըոլոր կուսակցական առողջ տարրերը, կարողացավ իր լոգունգ-ների շուրջը համախմբել թե կոմիտեներում աշխատող-ների և թե նույնիսկ տեղերի սոցիալ-դեմոկրատական մասսաների հասարակական կարծիքը. մի խոռոչով՝ «Իսկրա»-ն խոչը հաւեանքների հասավ, կազմակերպչորեն միացնելով բոլոր այն հատվածները, վորոնցից կազմը-ված եր այն ժամանակ մեր կուսակցությունը:

Սակայն, արդյոք ինքը, «Իսկրա»-յի խմբակն ուժեղ կերպով կափված ամրողական մի միջուկ եր, վոր յերկուուղ ձկրեր պառակտման և ներքին տարածայնությունների ուրվականից: Այս հարցին ստիպված ենք տալ մի պատասխան վորն այնքան ել հավատ չի ներշնչում իսկրովցիների խմբակի միասնականության մասին: Լինում յեին մուենատներ, յերբ խմբագիրների միջև (խմբագրական կազմի մեջ մտնում եյին՝ լինինը, Մարտովը, Պոտրեսովը և «Եշխատանքի Ազատության իրմակի» անդամներ, Պետքանովը, Ակսելբոնդը և Վերտ Զասուլիչը) հաշտությունն ու համաձայնությունը մադից եր կախված լինում: Տարածայնությունների զբուազոր աղբյուրն այն տարբերությունն եր, վոր գոյությունը ունո՞ր մի կողմից՝ Պետքանովի, մյուս կողմից՝ լինինի հոգե-մտավոր կառուցվածքի և ընդունակությունների մեջ: Առաջինն՝ իշխելու սովոր մտքով,

հակածառություններ չհանդուրժող և իր հին, 10 ամյակ-
ների գործունեյությամբ ձեռք բերած քաղաքական կա-
պիտալով ապրող, յերկրորդը՝ Լենինը՝ հեղափոխական
կովի յերիտասարդ առաջնորդ, վորն իր մեջ յերջանիկ
կերպով միացնում եր ահագին մարքսիստական պատ-
րաստականությունը ոռւսական այն ժամանակվա-
րականությունը կազմող առանձին կոնկրետ մոմենտ-
ների հստակ հասկացողության հետ։ Ինչպես ընկ-
կամենան և ասում, արդեն այն ժամանակ ել Պլեխա-
նովը ներկայացնում եր անցյալը, իսկ Լենինը՝ մարք-
սիզմի ապագան Ռուսաստանում։ Յեվ իրոք հրաշա-
լի կրթություն ունեցող մարքսիստ Պլեխանովի քա-
ղաքական միտքը նշանավոր չափով ամռւ եր հենց
այն պատճառով, վոր նա թրծված, լեցված չեր կեն-
դանի պատկերացումներով այն փոփոխությունների
մասին, վոր տեղի եյին ունեցել Ռուսաստանում իր
քսանամյա եմիգրացիայի միջոցին, նա չգիտեր ու չեր
զգում հոգեբանությունը պրոլետարական մասսաների,
վորոնք այդ ժամանակամիջոցում քաղաքականապես
չափազանց աճել եյին։ Նա չեր հավատում թե զյու-
ղացիությունը պատրաստ և պատմական ասպարեզ
դուրս գալու վորպես հեղափոխական հոկայական ույժ,
գերազնահատում եր լիբերալների դելը ցարիզմի զեմ
մղվելիք առաջիկա պայքարում։ մի խոսքով՝ պարում եր
Ռուսաստանի պատագրական շարժման հեռանկարնե-
րի մասին ունեցած իր անցյալ հասկացողություննե-
րով և շատ բարկացկոտ վերաբերմունք ուներ դեպի
Լենինի փորձերը՝ ըսուր այդ հարցերը լուսաբանել ժա-
մանակից հասուն ացած ինդիրների տեսակետից։
Պլեխավոր տարածայնությունները ոհսկրաշ-յի ալի

յերկու առաջնորդների միջև ծագում եյին կուսակցու-
թյան ծրագրի մշակման առիթով։ Լենինը անդում եր;
թե կապիտալիզմը պետք ե բնույթագծել լինվին ճշգրիտ
էկրպով։ ռուսական պրոլետարիատի կուսակցությու-
նը, — անդում եր նա, պետք ե իր ծրագրի մեջ ամենա-
վորոշ, աներկմիտ կերպով բացատրի թե ինչ մեղա-
դրանք ե առաջադրում նա ոռւսական կապիտալիզ-
մին։ պետք ե վորոշ կերպով ասի, վոր նա պատերազմ
ե հայտարարում նրան՝ հատկապես ոռւսական
կապիտալիզմին, վորը գտնվում ե զարգացման սպե-
ցիֆիկ պայմանների մեջ։ Այն ինչ Պլեխանովի նախա-
գիծն, ըստ Լենինի, «տալիս ե վոչ թե տվյալ միան-
գամայն վորոշկապիտալիզմի վորոշակի ույյալ պահանջ-
ների դեմ կ ո վ ո պ վորոշարիատի ծրագիր, այլ
ընդհանրապես կապիտալիզմին նվիրված տնտեսագի-
տական ձեռնարկ կ ի ծրագիր»։ Բացի այդ, հակա-
ռակ Պլեխանովի առաջարկած ամբողջ «աշխատավոր
չահագործվող մասսաների» ընդհանուր ողժգործության
թեզին, Լենինն առաջարկում եր պարզ ու կատեգորիկ
կերպով բացադրել և ընդգծել պրոլետարիատի դասա-
կարգային կովի գաղափարը, վորպես առաջիկա սո-
ցիալական շարժումների հիմնական ազդակ։

Ագրարային ծրագրի առթիվ խմբագրական կազ-
մի անդամների մեջ ամենավիճելի հարցը հողի ազդայ-
նացման հարցն եր։

Հողի ազդայնացումը բուրժուական հեղափոխու-
թյան շրջանում Պլեխանովը համարում եր մի-
անգամայն ռեակցիոն, հետադիմական մի գա-
ղափար, քոնի վոր, նրա կարծիքով, խոշոր հողատիրու-
թյունից մանր հողատիրության անցնելն ընդհանրա-

պես հետագիմ մի քայլ եւ իսկ լենինը, վոր դեռ
1902 թ. արդեն հասկացել եր, թէ ինչպիսի հսկայա-
կան հեղափոխական դեր կարող ե խաղու գյուղացիու-
թյունը գալիք հեղափոխության մեջ, չեր վախենում
այդ լոգունդի ռոպանալի» հետեանքներից, երակար-
ծիքով, այդ լոգունդը համենայն դեպս կարող եր ավե-
լի մեծ թափ ներշնչել հեղափոխական շարժմանը,
յերբ այս վերջինը պաշտպանություն և ոգնություն
ստանալ իր ափերից գուրս յեկած գյուղացիական
տարերքի կողմից: Դժբախտաբար, այս անգամ ել
լենինը զիջեց Պլեխանովին և իր լոգունդն որակար-
գից հանեց, վորպեսզի իսկրայականների «միությունը»
վերջնականապես չքայլայվի, թեև նա առանց այն ել
քայլայվելու վրա յեր:

Ակսելրոդն ու Զասուլիչը, վոր բաժանում եյին
Պլեխանովի բալոր նախապաշարությունները, սովորաբար
լրելցան և անվերապահ կերպով գնում եյին նրա
հետեւց, իսկ տաղանդավոր հրապարակախոս, սակայն,
իր մարքսիստական «գեմքը» չունեցող՝ Մարտովը,
համակված հաշտեցուցիչ տրամադրություններով, մի
կողմից մյուսն եր ընկում: Բանն այնտեղ եր հաս-
նում, վոր, որինակ, լենինի ռուսական Ս.-Գեմպկրա-
տիայի ազգարային ծրագիրը հողվածին նվիրված չա-
փաղանց բժախնդիր նկատողությունների առիթով,
լենինը սահմալած եր հիշեցնել խմբագրությանը, թե
յեթե նույնիսկ իրան՝ լենինին համարում են վորպես
ընդհանուր կառքի լծված մի համեստ ռձի», իսկ Պլե-
խանովին՝ վորպես կառապահ, առաջ չչե՞ վոր պատա-
հում ե, վոր նույնիսկ ամենասահմակոծված, ամենա-

անկյալ ձին իսկ վեր ե քցում չափից անց տաքար-
յուն կառապանին»:

Լենինը միծ նշանակություն եր տալիս այն
նպատակսերին, վոր նա իրեն առաջ գրել եր, յերբ
ոկտի եր աշխատել «Աշխատանքի Ազատագրումը»
խմբակի հետ, և այդ պատճառով չափազանց զիջող եր,
ու այդ անսովոր զիջողականությունն եր, վոր վրկում
եր «Իսկրա»-յի խմբագրությունը պառակտումից և
հնարավորություն եր տալիս նրան առաջ տանելու իր
պատճական միսսիան մինչև ցանկալի մոմենտը, մին-
չև կուսակցության յերկրորդ համագումարը: Սակայն,
ապագա մենշնիզմի սաղմերը հասունանում երեն ար-
դին հենց իրեն՝ իսկրայական խմբակի ներսում:

Մտայնությունների նույնպիսի վոչ լիակատար
միատեսակություն եր նկատվում նաև «Իսկրա» յի
ֆրոնտի մի քանի ուրիշ ճակատներում: Առենից ցա-
վալին այն եր, վոր սույնիսկ համագումար հրապիրե-
լու համար կազմված Կազմակերպիչ ուժիտեն իրենից
մի միատարր ու համերաշխ խմբակ չեր ներկայաց-
նում: Որինակ՝ «Եամակներ ընկերներին ԽՍՀԲԿ
յերկրորդ համագումարի մասին» աշխատության հե-
ղինակ Պավլովիչը (Պ.Ա. Կրասիկով) սաելով, իսկրա» յի
յերկրորդ ներկայացուցիչը Կազմակերպիչ Կոմիտեյում
պատկանում եր «Իսկրա»-յի խմբակի այն անդամների
թվին, վորոնք (Կատակով նկատում և Փակագծերէ
մեջ Կրասիկովը) «ամաշում եյին իրենց իսկրայական
համարելու: Կատակը մի կողմ, սակայն, այդ այնուա-
մենայնիվ նշանակում եր, վոր մինչև իսկ Կազմա-
կերպչական Կոմիտեյում «Իսկրա»-յի խմբակը մի ընդ-
հանուր լիզու չուներ: Յեկ, իսկապէս, ի՞նչ ընդհանուրը

լեզու կարող եր լինել, յերբ, որինակ, մեկն այդ «ամաչող» իսկրայականներից՝ Յե.Ալեքսանդրովան (Շտեյնը) պնդում եր, թե համագումարին պետք ե խորհրդական ձայնով հրավիրել նաև «Բարոչեյ» Դելու-ի կողմանակից Կրիչևսկուն, վորը շարունակ քննադատում եր «Իսկրա»-յի տեսակետները. Ու այդ հրավիրը նա պատճառաբանում եր նրանով, վոր ինքը համերաշխ է Կրիչևսկու համար: Բացի այդ, յեթե ի նկատի առնենք, վոր կազմակերպիչ Կոմիտեյի մեջ մտնում ելին նաև գեղի «Իսկրան» թշնամարար վերաբերմունք ունեցող հրեյական «Բունդ» կազմակերպության ներկայացուցիչը և իր ներ ծխական շահերից չհրաժարված գալառուկան «Յունի Ռարոչի» թերթի աշխատակիցը, ապա անմիաբանության պատկերը. Կազմակերպիչ Կոմիտեյի անդամների միջև պարզ կլինի:

Համագումարի աշխատանքները սկսվելուց անմիջապես հետո կազմակերպիչ Կոմիտեյի անդամների այդ տարակարծիքության հողի վրա ծագեց մի միջակեպ: Համագումարի կազմը վորոշելիս հարց ծագեց «Բայրբա» գրական խմբակի մասին, վորի մեջ մտնում ելին՝ Ռյազանովը, Ստեկլովը և Դանեիչը: Այս խմբակն աշխատում եր քաղաքականապես լինքնորոշվել «Իսկրա»-յի խմբակից դուրս, անկախ նրանից և վորոշչափով նույնիսկ հակառակ նրան: Մանդատային հանձնաժողովը, կազմակերպիչ Կոմիտեյի յերկու նվազ վորոշմների համաձայն, դեմ արտահայտվեց «Բայրբա»-յի հրավիրելուն: Կազմ. Կոմիտեյի անդամ Ենգորովը (գրականագետ «Յունի Ռարոչի» թերթից) ահագին աղմուկ հանեց այդ առթիվ: Վիճաբանությունները տաքացան, ձայները բաժանվեցին: «Իսկրա»-յի

ներկայացուցիչները հակառակ եյին, իսկ մյուսները՝ կողմանակից եյին հրավիրելուն: Վիճաբանությունները կենտրոնացան այն հարցի վրա, թե վ՞րին տալ գերապատվությունը. կուսակցականության թե՛ խմբակային աշխատանքի սկզբունքին, Վիճաբանություններից պարզվեց, վոր «ոպապովկիցիայի նպատակն եր, ինչպես գրում ե Լենինը իր «Միքայլ առաջ, յերկու քայլ հետ» գրքույկում, պահպանել փոքրիկ խմբակների անկախությունը, առանձնահատկություններն ու նեղ ծխական շահերը «Իսկրա»-յի սկզբունքներով ստեղծվող լայն կուսակցության կողմից կլանվելուց»:

Հենց առաջին իսկ մարտական հարցերի քննության միջոցին ակներև դարձավ, վոր համագումարը դառնալու յե համառ պայքարի ասպարեզ՝ իսկրայական ուղղության հաղթանակն ապահովելու համար: Իսկրայականները ներկայացված ելին 33 ձայնով, նրանց անհայտ հակառակորդները՝ (հակախսկրայականները) 8 ձայնով. այս վերջինների թվում 5 ձայն ուներ Բունդը, 3 ձայն՝ «Բարոչեյ» Դելու-ի կողմանակից բացարձակ ուղպորտյունիստները (Մարտինով, Ակիմով և Բյուկեր): Իսկ այդ յերկու բենուների միջև տարութերվում եր «Ճահճային» խմբակն իր 10 ձայնով: Թվում եր, թե «Իսկրա»-յի կողմանակիցների հաղությունը բոլոր հարցերում լիովին ապահովված ե Յեկատերինա այդպես մի անբաժան ամբողջություն ներկայացներ, Սակայն, հենց բանն ել այն ե, վոր «Իսկրա»-յի կողմանակիցների մեջ կային անհետեղական տարրեր, վորոնք կարող եյին միանալ համագումարի աջ թեին և դրանով նժարի ծանրությունը թեքել նրա կողմը:

Խմբավորումների հետագա պատկերը համագումարում ապացուցեց, վոր իսկրայականների համար այդ վտանգը լիովին իրավացի յեր:

Այսպիսի հարցերում, վորոնք, «Իսկրա»-յի տեսակետով, անվիճելի եյին, բռոր իսկրայականներն ամբողջովին միացած դուրս եյին գալիս ընդում աջակողմյան տարրերի, ըստ վորում՝ «կենտրոնը» յերբեմն համերաշխում եր նրանց, յեթե միայն իր ներկայացուցիչների շահերը (նրանց սիրեցյալ խմբակայնությունը՝ «կրուժկովչինան») դրանից անմիջապես չեյին տուժում: Այդպիսի հարցերից եր, որինակ, Բունդի հարցը, վորոն աշխատում եր չձուլվել կուսակցության հետ, այլ պահպանելով իր ազգային ինքնուրույնությունը, միանալ նրա հետ ֆեղերատիվ հիմունքներով: Համագումարին ի հաստատումն ներկայացված Քունդի կանոնադրության յերկորդ կետում ասված եր. «Բունդը հրեյական պրոլետարիատի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունն ե, վորոն իր գործունեյության մեջ չի սահմանափակված վորմեյերկրամասի շրջանակներով և մտնում ե կուսակցության մեջ վորպես հրեյական պրոլետարիատի միակ ներկայացուցիչը»: Հին «Իսկրա» իր ժամանակին շատ եր պայքարել Բունդի սահմանադրության այդ սկզբունքի դեմ և այդ պատճառով համագումարում խսկրայականների մեջ այդ առթիվ յերկու կարծիք լինել չեր կարող: Իսկրայականներին հակառակ քվեյարկեցին Բունդի ներկայացուցիչները (5 ձայն) և ձեռնպահ մնացին 5 հոգի. «Ռաբոչից Դելու»-ի 2 ներկայացուցիչները և կենտրոնի աջակողմյաններից՝ Մախովը յերկու ձայնով: «Իսկրա»-յի մատուցած ձառա-

յությունների գնահատության և նրան վորպես կուսակցության որգան հաստատելու հարցում ձայնների մոտավորապես նույն բաժանումը տեղի ունեցալ (խմբագրությունը 5 ձայնով ձեռնպահ մնաց):

Սակայն, յերբ գործը հասնում եր կրուժկովչինային (որինակ՝ «Յուժնի Բաբոչի» խմբակի լուծման հարցում, կամ «Արտասահմանյան սոցիալ-դեմոկրատների լիգան» վորպես կուսակցության արտասահմանյան միակ կազմակերպությունը ձանաչելու հարցում), ինչպես և այն դեպքերում, յերբ հարցը վերաբերում եր ավելի բարդ խնդիրներին, վորոնք չեյին զետեղվում ներկայացուցիչների սահմանափակ մտածողության շրջանակներում (որինակ՝ ագրարային ծրագիրը), այն ժամանակ կենտրոնն ամբողջովին և համերաշխ կերպով նետվում եր քացարձակ ոպպորտյունիսաների զիրկը:

Վերջապես, յերբ ուժգին պայքարի ընթացքում պարզվում եր, վոր նույնիսկ «Իսկրա»-յի վորոշ կողմանակիցների ուղղեներն անընդունակ են ըմբռնելու իսկրայական հետեւղական հայեցակետերն, այն ժամանակ համագումարի աջակողմյան թերին և «Ճահիճին» միանում եյին անհետեղական իսկրայականներն ընդում հետեւղական իսկրայականների, և այսպիսի դեպքերում ույժերի փոխհարաբերությունները դասավորում եյին վոչ հոգուտ հետեւղական իսկրայականների (որինակ՝ կանոնադրության առաջին կետի քվեարկությունը, վորի մասին կրխունք հետո):

Այսպիսով իսկրայականների փոքրամասնության տաքարյուն, ջային և հիստերիկ առաջնորդ Մարտովի համար առաջիկեավ Խոշոր գաղթակղություն՝ տախունի մասնակին առաջ Առաջ Մասնակին առաջ:

Նել իր հետեւից հակալենինյան միաբան բանակը դեպի վճռական կափվ իսկրայական այն «զիկատատորի» գեմ, վարի ազդեցությունից նա վաղուց ցանկանում եր ազատագրվել, վորպեսզի կարողանա զգալ ավելի մեծ հարգանք դեպի ինքը, վորպես բավականաչափ «հասունացած» և «անկախ» քաղաքական գործիչ վերջի վերջո այդպես ել պատահեց: Փոքրիկ Մարտովն ազատագրվեց մեծ կենինի ազդեցությունից և... գերթարձավ—յերկար ժամանակով և լուրջ կերպով—ուրիշ «իւսիչի» (Ֆեոդոր Իլյիչ)՝ Դանին:

Համագումարի ամենանշանավոր մոմենտներից մեկը ծրագրի շուրջն առաջացած պայքարն եր: Այստեղ իսկրայականների դեմ բավական յերկար և մանրամասն ճառով գուրս յեկավ կուսակցության այն ժամանակվա ոպպորտյունիստական թեկի թեյորեաթիկ Մարտինովը: Ճիշտ ե, նրա գործնական նպատակն եր մի այնպիսի աննշան ուղղում մտցնել ծրագրի մեջ, վորն ընկ. Տրոցկուն առիթ տվեց հիշելու Շչեդրինի ֆրազը, թե «նա խոստանում եր մեծ արյունեղություններ, բայց փոխարենը մի սարյակ կերպվ»: Մարտինովն առաջարկում եր մի կետում ավելացնել «գիտակցություն» խոսքը, իսկ մի ուրիշ կետում՝ «շահագործողներ» բառը փոխարինել «շահագործել» բառով: Սակայն, ինչի՞ն այդ տեխնիկական փոփոխության մեջ չեր. Մարտինովի յելույթը նպատակ ուներ սրել համագումարի ուշադրությունը «Բարոչեյ Դելո»-ի կողմանակիցների գեմ կենինի մզած պայքարի հին հարցերի վրա և, գլխավորապես, «ինչ անել» գրքույկի հեղինակի (կենինի) այն թեղինի վրա, վորը խոսում եր մասսաների տարերայնության և սոցիալիստական գի-

տակցականության փոխհարաբերությունների մասին: Անենին իր այդ գրքույկում «Բարոչեյ Դելո»-ի այն սպազորտյունիստական վայնասունին, թե «Իսկրան» նսեմացնում ե բանվորական շարժման տարերայնության դերը, կտրուկ կերպով հակադրում եր «Իսկրա»-յի տեսակետը և ընդգծում այն միտքը, թե ինքն ըստ ինքյան բանվոր դասակարգը չի ստեղծում գիտական սոցիալիզմի թեյորիան, այլ այդ թեյորիան պրոլետարական մասսաների գիտակցության մեջ մտնում ե գրսից: Ուստի վայնասուն բարձրացնել այն մասին՝ ասելով, թե «Իսկրան» ույժով ցանկանում ե բանվորների ուղեղների մեջ մտցնել սոցիալիստական միտքը, իբր թե առանց հաշվի առնելու պրոլետարիատի «ինքնամփոփ» դասակարգային զարգացման որենքները, կարող են միայն «պոչականները» (ԽՅՈՒՏԾԵ), վորոնց համար յուրաքանչյուր մի յեռանդուն փորձ՝ հեղափոխականացնելու պրոլետարիատին, բարձրացնելով նրա գիտակցությունը մինչ այն աստիճան, զոր նա կարողանա սոցիալ-դեմոկրատորեն (այժմ մենք կասենք՝ բայլշեկորեն) հասկանալ ու ըմբռնել պրոլետարիատի կռվի վերջնական նպատակները, թվում եր մարգարիտորեն վնչ հետեղական և պատմության «խաղաղ ընթացքի» համար խիստ վտանգավոր: Ահա կենինի այս մտքի դեմ եր հարձակվում Մարտինովն իր յերկար ճառում: Սրա հետ միասին «Բարոչեյ Դելո»-ի մյուս սյուներից մեկը՝ Ակիմովը, շտապեց Մարտինովի մտքերին ավելացնել նաև իր սիրեցյալ գաղափարները, բացասելով «աղքատացման թեյորիան» (այն մտքով, վոր ժամանակակից հասարակության մեջ հնարավոր ե պրոլետարիատի կենսական նյութական

պայմանների աստիճանական բարելավումը մինչև սուցիալիզմը, Այս միտքը պաշտպանում էին բոլոր ոպպորտյունիստները), «վիճելով» պրոլետարիատի դիկտատուրայի սկզբունքների դեմ: Ակիմովը շատ յերկուղ եր կրում, վոր «Խոկրա»-յի ծրագիրը սպառնում է կուսակցությունն իր ակտիվությամբ առանձնացնել և հակադրել պրոլետարական պասսիվ միջավայրին, քանի վոր, ասում եր նա, ծրագրի նախագծի մեջ «ամենաեղանակագործ է իրավում ե վորպես յենթակա, իսկ պրոլետարիատը՝ վորպես լրացուցիչ»:

Խոկրայականների համար գդվար չեր, իհարկեցախախել Մարտինովի և մանավանդ Ակիմովի պատճառաբանությունները, սակայն, չի կարելի չարձանագրել, վոր համագումարին մասնակցող իսկրայականներից վոչ բոլորը հստակ հասկացողություն ունեին հեղափոխական մարքսիզմի հիմնական սկզբունքների մասին: Այսպիս, որինակ. Ակիմովին հակածառելիս «Խոկրա»-ի կողմանից յերիտասարդ և տաղանդավոր Տրոցկին ի միջի այլոց թույլ տվեց իրան արտահայտելու այն միտքը, թե «պրոլետարիատի դիկտատուրան հնարավոր կլինի միայն այն ժամանակ, յերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և քանվոր դասակարգը, վորոնց իրար հակադրելն այնքան վախեցնում է Ակիմովին, մոտ կլինեն ձուլման, մոտ կլինեն նույնանալուն: Այս զաղափարը հետագայում հիմք ծառայեց մենշևիկների տեսակետներին՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին և նրանց հարձատարիատի դիկտատուրայի մասին և նրանց հարձատարիատի սկզբնի «յակորինականության» դեմ: Բակումներին լենինի «յակորինականության» դեմ: Բերեադաբար, պատմությունը, հակառակ մենշևիկյան բերադաբար, պատմությունը, մեզ մոտ քաղաքական իշխանություններին, մեզ մոտ քաղաքական իշխ-

առթյունը պրոլետարիատի ձեռքը հանձնեց (1917 թ.), առանց սպասելու այնքան ժամանակ, մինչև վոր կուսակցությունը կազմակերպչորեն ընդգրկեր վողջ պրոլետարիատին, ու այդպիսով կուսակցությունն ու պրոլետարիատը ձուլվելին, նույնանային:

Թե վորքան քաղաքականապես խակ եր «Խոկրա»-յի ուղեկիցներից, նույնիսկ յուրատեսակ լիդերներից վորմանց միտքը յերկում ե, ի միջի այլոց, նաև հետևյալ բնորոշ գեպքից: Յերբ Պլեխանովը, պաշտպանելով Պոսագովսկու տեսակետը գեմոկրատական սկզբունքների մասին, պրոլետարական հեղափոխության վերջանական նպատակներից յենելով, հայտնեց, վոր միերջանական նպատակներից յերկու շամուռովով կողմից ընտրված պարլամենտը յերկու շաբաթվա մեջ պետք ե ցըել, յիթե ընտրություններն անհաջող են յեղել, և Յուժնի Տարոչյանի խմբակի ներառությունը պատճենագործ է այսպիսի կազմակերպությունը, վերև հիշված Յեգորովը, վորն իրը թե կայացուցիչը, վերև հիշված Յեգորովը, վորն իրը թե վաղուց «Խոկրա»-յի կողմանից եր համարվում, Պլեխանովի այդ ճառին պատասխանեց սուրցներով: Համապատական մեկն ուրիշ անդամ (Գոլդրիշտ) նկատեց, վոր, Պլեխանովի տեսակետից յենելով, ընդհանուր ընտրական իրավունքի պահանջը ուետը ե դուրս ձգել մեր ծրագրից:

Զանազան հոսանքների այս պայքարի կարևոր մոմենտներից մեկն ել համագումարում կուսակցության կանոնադրության առաջին կետն եր: Վետք են կատարել, վոր Լենինը դեռ համագումարից շատ առաջ պատրաստել եր կուսակցության կանոնադրության իր պիտի այդ խնդրով ինքնուրուցյն կերպով և թիսել եր մի շատ յերկար, 39 կետերից բաղկացած, ձգձգված ու

անշնորք մի բան, վորն, ըստ Լենինի, տառապում եր դժվար բուժելի ջրգողությամբ և, հակառակ Լենինի նախագծի իր թե չափազանց ու ավելորդ կենտրոնացման, վորպես թե արտահայտում եր կազմակերպչական հայացքների ռառանձին» միտեսակետ։ Մարտովի այս նախագծի առթիվ Լենինն իր «Քայլեր» աշխատության մեջ զվարթ իրոնիայով նկատում ե, թե ընկ. Մարտովն իր նախագծի ^{38/39} մասն աշխարհից և համագումարի քննությունից ծածկելով շատ խելք վարվեց։ Համագումարի քննության նյութ դարձավ այդ նախագծի միայն ^{1/39} մասը. այսինքն՝ մի կետը (§ 1), բայց հենց այդ կետին վիճակված եր պատմական սեպի դեր խաղալ. այդ կետը համագումարում իսկրայականներին բաժանեց յերկու մասի բաժական խոշոր սկզբունքային հարցի առթիվ և տոաջինը հիմք ծառայեց նրան, վոր կուսակցությունը հետադայում բաժանվեց ֆրակցիաների՝ բոլշեիկների և մենշեիկների։

Համագումարի քննությանն առաջարկված եր կանոնադրության առաջին կետի յերկու վարիանտ։ Մեկը Լենինի վարիանտն եր, վոր ասում եր. «կուսակցության անդամ համարվում ե նա, ով քննունում ե նրա ծրագիրը և ոգնում է կուսակցությանն ինչպես նյութական միջոցներով, նույնպես և իր անձնական մասնակցությամբ կուսակցական կազմակերպություններից վորեւ մեկի մեջ»։ Մյուս վարիանտը Մարտովի առաջարկածն եր, վորն ասում եր. «Բոլուսաստանի Առյօնի-Դեմոկրատական Բանվորական կուսակցության անդամ համարվում ե յուրաքանչյուրը, վոր ընդունում ե նրա ծրագիրը, ոգնում ե կուսակցությանը նյութական միջոցներով և անձամբ կանոնավորապե-

աջակցում ե նրան կուսակցության կազմակերպություններից վորեւ մեկի ղեկավարությամբ»։

Ամենից առաջ աչքի յե ընկնում այն, վոր Մարտովի ձեսկերպումը կրում ե այս շատախոս հրապարակախոսին հատուկ անմիտ ֆրազլողոգիայի սովորական հետքեր (անձնական աջակցություն՝ կազմակերպություններից վորեւ մեկի ողեւ կավար թյամբ), այն ինչ հարցի ամբողջ եյությունը կայանում եր նրանում, թե ինչպես և իրականանում այդ ղեկավարությունը, յեթե կուսակցության անդամն անմիջապես չի մասնակցում կազմակերպության ամառանում կամ համառոտությանը, վոչ մի կասպումը, չնայած իր համառոտությանը, վոչ մի կասկած չի թողնում կուսակցության անդամ լինելու հասկած այսպիս կուսակցության եյական հատկանիշները վորոշելիս։ Դժվար կացողության եյական հատկանիշները վորոշելիս, նիմի յերկու տասնյակ ըառերից կազմված հատկապես այդ չարաբաստիկ նախադասությունը կարող ե կատարել այն լուցկու դերը, վորն ընկնում ե ոյուրավառ նյութերի կույտի վրա։ Լենինը ինքն ինքն ել հետագայում («Քայլեր») նկատում ե, վոր այս տարածայնությունն ինքն ըստ ինքյան չեր կարող պատճառ դառնալ կուսակցության պառակտման։ «Բայց, բացատրում ե նա, ամեն մի փոքր ի կ տարածայնություն կարող ե մեծանալ, յեթե անդեն նրա վրա, յեթե առաջ քաշեն նրան դեպի առաջին նրա վրա, յեթե փորձեն վնտրել այդ տարածայնության բոլոր արմատներն ու բոլոր ճյուղերը», մեկ խոսքով. «յեթենա, այդ տարածայնությունը, ծառայում ե վորպես շրջման կետ դեպի վորոշ սխալ հայեցած կետ ե ը»։ Մարտովի այս գաղափարը վիճականություն-կետ ե ը»։

ների ընթացքում ապագա մենշևիկներն ավելի «խորացրին» և հենց այդ հանգամանքով ե բացատրվում այն ձեղքը, վոր առաջացավ իսկրայական «անոթի» մեջ, վորպիսին հետագայում վոչ մի կերպ չհաջողվեց ծեփել և վորը գնալով ավելի ու ավելի լայնացավ, մինչև վոր անոթը վերջնականապես քայլավեց:

Առաջինը, վոր իր վրա վերցրեց Մարտովի միտքը խորացնելու և նրան սկզբունքային բարձրության վրա դնելու անշնորհակալ դերը, ու Ակսելրոդն եր, վորը հետագայում մենշևիկյան ֆրակցիայում կատարում եր «սուրբ հոգու» դերը: Ակսելրոդը միայն մի նպատակի հասավ, այն ե՞նա ապացուցեց, վոր Մարտովի ֆորմուլայի միջից պատճառքար չե բաց թողած կուսակցության անդամի մասնակցությունը կուսակցության վորեն իսկական կազմակերպության մեջ, այլ համաձայն այն մաքի, վոր «Նարոդնայա Վոլյա»-յի որինակով, ՌՍԴԲ կուսակցության անդամ կարող ե համարվել ամեն վոր, ով նրան այս կամ այն կերպ ոգնում է ի ինքն իրան կուսակցության անդամ և համարում: Անորոշությունների տեղիք չտալու համար նա բերեց մի շատ սրամիտ որինակ. ևմի պրոֆեսորի, վորն իրան սոցիալ-գեմոկրատ և համարում և այդ մասին հայտարարում եւ: Այսպիսով՝ ինքն իրան կուսակցության անդամ համարելը, թեկուզ ամեն մի պատահական ուղեկցի կոզմից, բավարար պայման եր համարվում կուսակցության անդամի կոչում ստանալու համար: Որինակ՝ մի վորեն «համակրող» խանում, յեթե պատապարում ե վորեն մի անհետալ սոցիալ-գեմոկրատի, կամ մի գիմնազիստ մի կապ պրակլամացիներ և տեղափոխել վորոշ հասցեյով («ողնության» կամ

»աջակցության» փաստն այստեղ ակներեւ ե) կարող ելին կուսակցության անդամ համարվել, յեթե, ինարկե, իրանք կցանկանային այդ կոչումն ընդունել: „Մենք կարող ենք միայն ուրախանար—զարգացնում եր Ակսելրոդի այս փայլուն միտքը Մարտովը, —յեթե ամեն մի գործադուլավոր, ամեն մի ցուցարար, պատասխանատու լինելով իր գործողության համար, կարող կլինի իրան կուսակցության անդամ հայտարարել“, վորովհետև՝ «քանի լայն լինի կուսակցությունը, այնքան լավ»: Վորպիսի գայթակղեցուցիչ միտք: Ահա, որինակի համար, ցուցարարների տաս հազարանոց մի բանակ փողոց ե գուրս յեկել: «Ցանկանում եք, ընկերներ, ՌՍԴԲ կուսակցության անդամ լինել—հարցնում ե հռետորը»: «Այս, ցանկանում ենք—համերաշխությամբ պատասխանում ե ամբոխը: Յեվ ահա կուսակցությունը միանգամից հարստացավ տաս հազար անդամով: Մի քանի քայլ ևս այդ ուղղությամբ, և ահա հին «Իսկրա»-յի ժամանակներում, կամ ավելի լավ ե՝ 1905 թվին, մեր կուսակցությունը կունենարշատ անդամ ավելի անդամներ, քան այժմ, բան տարի անց...

Համագումարում կանոնադրության առաջին կետի շուրջը ծագած վիճաբանությունների միջոցին մենշևիկմի ապագա լիդերների միտքն ավելի ու ավելի եր խճճում կուսակցության և դասակարգ հասկացողությունների նույնացման, հավասարեցման հողի վրա: «Յեթե մենք դասակարգի կուսակցություն ենք,— ասում եր Ակսելրոդը, —մենք պետք ե մտածենք այն մասին, վորպիսի կուսակցությունից դուրս չթողնենք այն մարդկանց, վորոնք զիտակցարար, թեև վոչ բո-

լորովին ակտիվ կերպով, հարում են մեր կուսակցությանը՝ Յերեակայեցեք, միլիոնավոր բանվորներ գիտակցում են իրանց կազմը պրոլետարական ավանդարդի հետ, հարում են նրան, ընդունում են նրա զեկագարությունը, և ահա, ըստ Ակսելրողի, մեղք կլիներ նրանց կուսակցությունից դուրս թողնելը: Թող միայն կուսակցությունն այժմ ընդգրկի վողջ, կամ համարյա թե վողջ, բանվոր դասակարգը և այն ժամանակ Մարտովի Փորմուլան իսկապես վոչ թե դատարկ ու մասակար Փրապա կլինի, այլ լայն հեռանկարներ բաց անող մի Փորմուլա, — ասում են նրանք:

Մարտովի նախադի համաձայն, «գոյություն ունի դավադրական կազմակերպություն», վորին «ընդգրկում ե ս-զեմոկրատական բանվորական կուսակցությունը»: Իսկ լենինը դրան հակադրում եր այլ գաղափար. «վոչ թե կուսակցությունը պետք ե ընդգրբկի դավադրական կազմակերպությանը, այլ հեղափոխական դասակարգը—պրոլետարիատը պետք ե ընդգրբկի կուսակցությանը, վորն իր մեջ պարունակում ե թե դավադրական և թե վոչ դավադրական կազմակերպություններ»:

Մի խոսքով, վորքան Մարտովը, Ակսելրողն ու նրանց հետևողներն ավելի յեն խորանում իրանց «ըսկը քրունքների» մեջ կուսակցության, պրոֆեսուրութեան հեղափոխականների, կուսակցության ու բանվոր գառակարգի փոխարարերությունների և «դավադրական կազմակերպության» մասին, այնքան ավելի ու ավելի ելին յերեան գալիս նրանց ոպպորտյունիստական և անարխիստական տեսակետները: Այստեղ եր, վոր Լենինը պարզ կերպով կարող եր համոզվել, թե վորպի-

սի վտանգ և սպառնում գործին իր գոտին արձակած և սանձը կորցրած Մարտովը, վորն իրան քաջարի «ոպպոզիցիայի» առաջնորդ եր գգում ընդգեմ լենինյան «տիրապետության»: Պաշտպանություն գտնելով այնպիսի «հեղինակությունների» կողմից, վորպիսին ելին Ակսելրողն ու Վերա Զասովկիչը, Մարտովը ծառւ եր յեղել իր անհատական առանձնահատկությունների և ըրոնակալ» լենինից անկախ լինելու գոռոզ գիտակցություններից: Նա շոյված եր կուսակցության համարյա թե կես մասի «ինքնուրույն» և «իսկական» առաջնորդի իր դերից:

